ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-7-1-Ա

ք. Երևան 08.07.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի հուլիսի 8-ի նիստում քննարկեց 2021 թվականի մայիսի 17-ին ներկայացուցիչ Տաթևիկ Ասատրյանի կողմից ներկայացված՝ «Ար տոբակո» ՓԲԸ հայաստանյան մասնաճյուղ ընկերության (Երևան, Օրբելի 51/26, ԱՄ) «ARTSAKH TABAK» (№20200965) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող «ԱՐՑԱԽ» («Գրանդ տոբակո» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, ք. Երևան, Շահամիրյանների 22 (ԱՄ), N-25660, 10.03.2017թ.) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 115-րդ, 122-րդ, 124.1-րդ, 127.3-րդ, 130-րդ և 132-րդ կետերի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճանի նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ (այսինքն մարդու (միջին սպառողի) մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն), չնայած առանձին տարբերությունների

առկայությանը: Ընդ որում, նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ մասը համընկնում կամ կատարված են այնպես, որ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է (ճանաչում է, իրեն հայտնի է), ինչպես նաև ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրի նմանությունը, այդ թվում՝ նաև այն դեպքերում, երբ այդ բառային տարրերը տարբեր լեզուներով գրված նույն իմաստն ունեցող բառեր կամ բառային արտահայտություններ են: Տվյալ դեպքում հայտարկված նիշը և ավելի վաղ գրանցված ապրանքային նշաններն ունեն իմաստային նմանություն, որը որոշվել է նշանների մեջ դրված նման հասկացությամբ, գաղափարով և նշանների համընկնող իմաստով, ինչպես նաև ընդհանուր առմամբ զուգորդվում են միմյանց հետ ընդհանուր տեսողական տպավորությամբ և տառերի դասավորվածությամբ, այն է՝ երկու նշաններում առկա տուփի վերևի հատվածում պատկերված են զիգզագաձև կտրվածքով ոճավորված դրոշներ, որոնց վրա գրված են «ԱՐՑԱԽ» և «ARTSAKH» բառերը, որոնք, չնայած լեզուների տարբերությանը, ունեն նույն իմաստը և ընկալվում և արտասանվում են նույն կերպ՝ «ԱՐՑԱԽ: Անդրադառնալով Ձեր կողմից ներկայացված նկատառումներին, այն է՝ «Հայտարկված և ավելի վաղ գրանցված ապրանքային նշանները չունեն տեսողական նմանություն, քանի որ հայտարկված նիշում առկա սլաքի նմանվող զիգզագաձև ձևավորումը չի կարող նույնանալ ավելի վաղ գրանցված ապրանքային նշանում առկա դրոշի հետ, քանի որ սլաքի նմանվող և ըստ էության ընդհատվող պիքսելների ամբողջությունը գտնվում է պատկերի աջ կողմում, իսկ նախկինում գրանցված ապրանքային նշանում նմանատիպ ձևավորումը գտնվում է ձախ կողմում», տեղեկացնում ենք, որ չնայած այն հանգամանքին, որ հայտարկված և ավելի վաղ գրանցված ապրանքային նշաններում առկա ծխախոտի տուփ հիշեցնող պատկերների վերևում, սլաքի նմանվող կտրտված գծերն ուղղված են մի դեպքում՝ դեպի աջ, իսկ մյուս դեպքում՝ դեպի ձախ, այնուամենայնիվ, երկու նշաններն ընդհանուր առմամբ զուգորդվում են միմյանց հետ իմաստային նշանակությամբ, քանի որ երկու նշաններում առկա նույնատիպ՝ ոճավորված դրոշների պատկերներն իրենց զիգզագաձև բաժանարար գծերով թողնում են նույն՝ Արցախի Հանրապետության դրոշի տպավորությունը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող «ԱՐՑԱԽ» («Գրանդ տոբակո» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, ք. Երևան, Շահամիրյանների 22 (AM), N-25660, 10.03.2017թ.) համակցված ապրանքային նշանին:

Բողոքարկողը ներկա չէր նիստին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել ներկայացուցիչ Տաթևիկ Ասատրյանի կողմից ներկայացված՝ «ARTSAKH TABAK» (No20200965) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐՈՒՍ ՍԻՄՈՆՅԱՆ